

անոնց մէջ կռանած էր նախապաշարութիւններ, որոնք պատառ մը վայելքին բռն մը տանջանք կը լծորդէին: Զէին խմեր, այգիէ արգիլուած ըլլալուն, քանի որ այդ բոյսին յարմար հողերը կը պատկանէին բարեբա՛ստ ազգին, մեր պատմութեան կողմէ «անողորմ զարմն իսմայիլի» յորջորջուած: Տխո՛ւր, բոլո՛րը, խոր, անդարման թանձրութեամբ մը: Ընկեր Մաթիկ հաճոյք ունէր, գիտական իր պատրաստութեան գնով անշուշտ, զանոնք նմանցնելու Հարաւային Ռուսաստանի լեռնամերձ մոլ-ժիկներուն, որոնց իմացականութիւնը այնքան տարրական ու զգայնութիւնը այնքան ալ մօտ էր ասոնց: Ամբողջ գրականութիւն մը չէր սպառած դժբախտութիւնը այդ տարրին: Բայց Մաթիկին վճիռովը այդ խնկելի նախիրը երկոտանիներուն երջանիկ էր սա գեղացիներէն, քանի որ զերծ էր թուրքին ահէն: Մեր պատմութիւնը անշուշտ բիւրեղացումներ ունի դրած մեր մտքին խորը: Զուր տեղը չեն անցնիր ժողովուրդի մը վրայէն գերութեան հազար հինգ հարիւր տարիներ: Կարճ շրջանը, որ կը սկսի տասներ-հինգերորդ դարու կէսէն, եւ նպատակ ունի մեր կեանքին մէջ քանի մը ժամանակակից յղացքներ սեւեռելու, կը յանգի արիւնոտ պարտութեան՝ 96ի ջարդերով: Զայն իր լրումին մէջ ապրողները եղան Մաթիկին լեռնականները: Ճակատագրին պատգա՛մը, որ պարզ էր ալ, վասըն-զի ողջ մնացողները պատրանք չունէին թուրքին ծրագրէն: Անշուշտ Սասունցի Դաւիթէն կոխատուած այդ հողերուն վրայ տապալ էին ինկած շատ Մսրայ Մելիքները: Իրողութիւնը ուրիշ էր, երբ Մելիքներու զօրքը հեքիաթին պատմածին նման, հիմա ալ կը սեւցնէր դաշտը ամբողջ: Բայց Դաւիթնե՞րը: Այսինքն՝ Մաթիկնե՞րը: Ու թշուառական այդ ամբոխը, գլուխը կախ՝ կը սպասէր հեքիաթին ձիաւորին եւ կայծակէ թուրին: Առայժմ անոնց «ալիւրը կը խառնէին մոխիրին», ինչպէս կը նկարէ հեքիաթը, կը շաղուէին արցունքով ու կը սպասէին:՝ Սարերուն փեռեկտումին, Մհերին ու... մահուան: Մեր նոր (ոգ) հոգեբանութիւնը ջարդերէն յետոյ անորակելի նուազում